Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա
Coalition to stop violence against women

Երևանի քաղաքապետ
պարոն Տ. Ավինյանին

«01» սեպտեմբերի, 2025թ.
№ 01-09-2025

Դիմում

Հարգելի պարոն Ավինյան,

Հավաքների ազատության մասին ՀՀ օրենքի համաձայն Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան տեղեկացնում է հոկտեմբերի 1-ին՝ կնասպանության հիշատակի օրվա կապակցությամբ իրականացվող ամենամյա միջոցառման մասին: Հավաքը նախատեսված է իրականացնել Կարապի լճի հարակից տարածքում: Հավաքի սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը ընկած է երեկոյան 18:00-ից մինչև 21:00-ը:

Հավաքը նպատակ ունի հիշատակել կնասպանության զոհերին, բարձրաձայնել ընտանեկան բռնության զոհերի սահմանափակ հասանելիությունը արդարադատությանը: Հավաքին մասնակցողների ակնկալվող առավելագույն թիվը կկազմի 80 մարդ:

Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելու են հետևյալ առարկաները կամ տեխնիկական միջոցները՝

1. Պաստառներ, թռուցիկներ (Հավելված 1);
2. Ջրի վրա լողացող ջահեր;
3. Անձրևանոցներ;
4. Սեղան (120x60 սմ):

Հավաքի կարգադրիչները երեքն են:

Հավաքի ավարտից հետո ջրի վրա լողացող ջահերը հավաքի կազմակերպիչները կհավաքեն իրենց ուժերով, որպեսզի չաղտոտեն շրջակա միջավայրը:

Հավաքի մասին իրազեկող դիմումին կից ներկայացնում ենք կազմակերպչի անձնագրի տվյալները (կցելով փաստաթղթի պատճենը), հեռախոսահամարները, փոստային և էլեկտրոնային հասցեները:

Սույնով խնդրում ենք ի գիտություն ընդունել հավաքի անցկացման իրազեկումը:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Նաիրուհի Սաֆարյան _____

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»
հասարակական կազմակերպության նախագահ

Էլ.փոստ՝ csvwarmenia@gmail.com
Վեբ.կայք՝ www.coalitionagainstviolence.am
Հասցե՝ ՀՀ, Երևան, Հովսեփ Էմին 119/2
Հեռ.՝ +374 41 43 37 43